*Ծանոթագրություն 1 «Իրավական դաշտ»*

«ԲԼԵՍՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Կազմակերպություն կամ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 19.02.2007թ-ին կայացած Կազմակերպության հիմնադիրների թիվ 1 ժողովի որոշմամբ և գրանցվել ՀՀ կենտրոնական բանկում ՝ ԿԲ խորհրդի 2007թ ապրիլի 17-ի թիվ 115Ա որոշմամբ (գրանցման վկայականի համարը ՝18), ստանալով թիվ 18 անժամկետ լիցենզիան:

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում զբաղվել է ձեռնարկատիրական և սպառողական վարկերի տրամադրմամբ:

Կազմակերպությունը որպես հարկատու և սոց. ապահովադիր գրանցվել է Սպանդարյան-1 տարածքային հարկային տեսչությունում 2007թ-ի ապրիլի 23-ին (ՀՎՀՀ՝ 02702899), այնուհետև ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 27.11.2007թ-ի թիվ 1-06/508Ա հրամանի համաձայն հաշվառվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ Բանկերի և Վարկային կազմակերպությունների հարկային տեսչությունում, իսկ այժմ հաշվառված է ՀՀ Ֆինանսների նախարարության Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում:

Կազմակերպությունը իր ծառայություններն է մատուցում գլխամասային գրասենյակի և թվով 2 մասնաճյուղերի միջոցով:

Կազմակերպության գլխամասային գրասենյակի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների փողոց 9 շենք, թիվ 70:

Կազմակերպության «Ստեփանակերտ» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ԼՂՀ, ք.Ստեփանակերտ, Մ.Մաշտոցի թիվ 1:

Կազմակերպության «Սիսիան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Սիսիան, Իսրայելյանի փողոց թիվ 33/2:

2015 թվականի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպությունը ունեցել է 32 աշխատակից, որից 8-ը՝ սպասարկող անձնակազմ:

*Ծանոթագրություն 2 «Հաշվապահական ստանդարտներ»*

Ներքոհիշյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների կազմման էական դրույթների նկատմամբ:

*2.1 Ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը*

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան և հաշվետվությունների ձևերը համապատասխանում են ՀՀՄՍ պահանջներին:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):

*2.2 Անընդհատություն*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Կազմակերպության գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Կազմակերպության ակտիվները

պետք է իրացվեն և պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:

*2.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են դրամարկղը և բանկերում գտնվող բանկային հաշիվները:
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվեկշռում ճանաչվում և չափվում են ստացման հատուցման իրական արժեքով:

*2.4. Հիմնական միջոցներ*

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

| | Օգտակար ծառայության ժամկետ (տարի ) | Դրույքաչափ (%) |
|---|---|---|
| Շենքեր | 20 | 5 |
| Հաշվապահական և համակարգչային տեխնիկա | 1 | 100 |
| Այլ հիմնական միջոցներ | 5 | 20 |
| Փոխադրամիջոց | 5 | 20 |
| Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ներդրումները | 20 | 20 |

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կհոսեն դեպի Կազմակերպություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Երբ վաճառվում են վերագնահատված ակտիվները, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

*2.5. Ոչ նյութական ակտիվներ*

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտվիները սկբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

| | Օգտակար ծառայության ժամկետ (տարի) | Դրույքաչափ (%) |
|---|---|---|
| Համակարգչային ծրագրեր | 10 | 10 |

*2.6 Վարկեր և այլ փոխառություններ*

Վարկերը և այլ փոխառությունները հաշվեկշռում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, հանած օրենսդրությամբ սահմանված, դրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

*2.7 Պահուստներ*

Ընդհանուր և հատուկ պահուստները ձևավորվում են Կազմակերպության ռիսկով տեղաբաշխված վարկերի, ինչպես նաև Կազմակերպության համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով պահուստը ձևավորվում է պարտավորությունում:

Ընդհանուր պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով՝ ընդհանուր պահուստին կատարվող հատկացումների հաշվին:

Հատուկ պահուստը հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով՝ հատուկ պահուստին կատարվող մասհանումների հաշվին: Անհուսալի ակտիվների գծով դուրսգրումներն իրականացվում են հատուկ պահուստի հաշվին: Նախկինում դուրս գրված ակտիվների դիմաց փոխհատուցման դեպքում նույնպես վերականգնվում է հատուկ պահուստը: Պահուստավորումը կատարվում և ճշգրտվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրը և պահուստում առկա ավելցուկային մնացորդը ուղղվում է եկամուտների հաշվին:

*2.8. Եկամուտների և ծախսերի ճանաչում*

Ընդհանուր առմամբ եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքին համաձայն, այսինքն եկամուտները և ծախսերը ճանաչվում են կատարման պահին, այլ ոչ թե փաստացի ստացման:

***<u>Ծանոթագրություն 3 «Տոկոսային և նմանատիպ եկամուտներ»</u>***

| | 01/04/15 30/06/15 | 01/04/14 30/06/14 | 01/01/15 31/12/15 | 01/01/14 31/12/14 |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտներ բանկային հաշիվներից և ավանդներից | 52022 | 13441 | 61232 | 27179 |
| Տոկոսային եկամուտներ վարկերից և այլ փոխատվություններից | 265923 | 236517 | 517752 | 467925 |
| Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից | 40311 | 39817 | 79642 | 78682 |
| | *358256* | *289775* | *658626* | *573786* |

***<u>Ծանոթագրություն 4 «Տոկոսային և նմանատիպ ծախսեր»</u>***

| | 01/04/15 30/06/15 | 01/04/14 30/06/14 | 01/01/15 31/12/15 | 01/01/14 31/12/14 |
|---|---|---|---|---|
| Տոկոսային ծախսեր հաճախորդներից ստացված փոխառությունների դիմաց | (132188) | (137669) | (265089) | (273089) |
| Տոկոսային ծախսեր կնքված ռեպո համաձայնագրերի դիմաց | (34751) | | (37843) | |
| Այլ տոկոսային ծախսեր | (298) | | (751) | |
| | (167237) | *(137669)* | (303683) | (273089) |

***<u>Ծանոթագրություն 5 «Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/(վնաս)</u>***

| | 01/04/15 30/06/15 | 01/04/14 30/06/14 | 01/01/15 31/12/15 | 01/01/14 31/12/14 |
|---|---|---|---|---|
| Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից զուտ շահույթ/ վնաս | -- | -- | -- | -- |
| Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ շահույթ/ վնաս | -- | -- | -- | -- |
| | -- | -- | -- | -- |

***<u>Ծանոթագրություն 6 «Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)</u>***

| | 01/04/15 30/06/15 | 01/04/14 30/06/14 | 01/01/15 31/12/15 | 01/01/14 31/12/14 |
|---|---|---|---|---|
| Վաճառքի համար նախատեսված ներդրումների վաճառքից զուտ շահույթ/ վնաս | -- | -- | -- | -- |
| | -- | -- | -- | -- |

***<u>Ծանոթագրություն 7 «Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)</u>***

| | 01/04/15 30/06/15 | 01/04/14 30/06/14 | 01/01/15 31/12/15 | 01/01/14 31/12/14 |
|---|---|---|---|---|
| Արտարժույթի առուվաճառքից ստացված զուտ շահույթ/(վնաս) | -- | -- | -- | -- |
| Արատրժույթի վերագնահատումից ստացվախ զուտ շահույթ/(վնաս) | (17) | (57) | (94) | (18) |
| | *(17)* | (57) | (94) | (18) |

***Ծանոթագրություն 8 «Այլ գործառնական եկամուտ»***

| | *01/04/15*<br>*30/06/15* | *01/04/14*<br>*30/06/14* | *01/01/15*<br>*31/12/15* | *01/01/14*<br>*31/12/14* |
|---|---|---|---|---|
| Արտասովոր եկամուտներ | -- | -- | -- | -- |
| Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից | 11031 | 9055 | 20227 | 19065 |
| Այլ եկամուտներ | | 830 | | 1315 |
| | *11031* | *9885* | 20227 | 20380 |

***Ծանոթագրություն 10 «Ընդհանուր վարչական ծախսեր»***

| | *01/04/15*<br>*30/06/15* | *01/04/14*<br>*30/06/14* | *01/01/15*<br>*31/12/15* | *01/01/14*<br>*31/12/14* |
|---|---|---|---|---|
| Ծախսեր անձնակազմի գծով | (63465) | (57621) | (109658) | (98933) |
| Կառավարչական ծախսեր | (11733) | (8224) | (19937) | (81248) |
| | *(75198)* | *(65845)* | *(129595)* | *(115181)* |

***Ծանոթագրություն 11«Այլ գործառնական ծախսեր»***

| | *01/04/15*<br>*30/06/15* | *01/04/14*<br>*30/06/14* | *01/01/15*<br>*31/12/15* | *01/01/14*<br>*31/12/14* |
|---|---|---|---|---|
| Վճարված տույժեր և տուգանքներ | | (500) | | (500) |
| Գովազդային և ներկայացուցչական ծախսեր | (1366) | (1097) | (2309) | (1966) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր | (2094) | (2096) | (4204) | (3728) |
| Այլ ծախսեր | (3238) | (3530) | (6304) | (6595) |
| | (6698) | (7223) | (12817) | (12789) |

***Ծանոթագրություն 12 «Շահութահարկի գծով ծախս»***

| | *01/04/15*<br>*30/06/15* | *01/04/14*<br>*30/06/14* | *01/01/15*<br>*31/12/15* | *01/01/14*<br>*31/12/14* |
|---|---|---|---|---|
| Ընթացիկ հարկի գծով ծախս | | | | |
| Հետաձգված հարկի գծով ծախս | | | | |
| | | | | |

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ

| | 2014 | ՖԱՄՀ ճանաչված | 2015 |
|---|---|---|---|
| Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ | 354 | | 4376 |
| Արժեզրկման և վարկային կորուստների պահուստներ | - | | - |
| Ընդամենը հետաձգված հարկային ակտիվներ | 354 | | 4376 |

Արժեզրկման և բանկային հաշիվների պահուստներ

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություններ | 64135 | | 21425 |
| Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ | 63781 | | 17049 |

***<u>Ծանոթագրություն 13 «Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ</u>***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Կանխիկ դրամական միջոցներ և դրան հավասարեցված վճարային փաստաթղթեր | *16469* | *11398* |
| Բանկային հաշիվներ բանկերում | 84648 | 11949 |
| Բանկերում բանկային հաշիվների միջոցների գծով ստացվելիք տոկոսներ | 568 | 2254 |
| Տեղաբաշխված բանկային հաշիվների և այլ ավանդների գծով պահուստ | | |
| | *101685* | *25601* |

***<u>Ծանոթագրություն 14 «Շահույթ /վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ</u>***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր | 1071673 | 1125223 |
| այլ երկրների պետական արժեթղթեր | | |
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի գծով ստացվելիք տոկոսներ | 56748 | 57013 |
| Հայաստանի Հանրապետության ոչ պետական արժեթղթեր | -- | -- |
| այլ երկրների ոչ պետական արժեթղթեր | -- | -- |
| ածանցյալ գործիքներ | -- | -- |
| Ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | -- | -- |
| դեպիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | -- | -- |
| | 1128421 | 1182236 |

***<u>Ծանոթագրություն 15 «Բանկերում տեղաբաշխված միջոցներ»</u>***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Բանկերում ներդրված ավանդներ | 1125449 | 126000 |
| Բանկերում ներդրված ավանդների գծով հաշվարկված տոկոսներ | 4212 | 186 |
| Դեպոնացված միջոցներ բանկերում | 70 | 55 |
| | *1129731* | *126241* |

***<u>Ծանոթագրություն 16 «Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ»</u>***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Ֆինանսական կազմակերպություններում ներդրված ավանդներ | -- | -- |
| Ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և այլ փոխատվություններ | -- | -- |
| Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ | -- | -- |
| | -- | -- |

***Ծանոթագրություն 17 «Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ»***

| | 30/06/15 | 31/12/14 |
|---|---|---|
| Տրամադրված վարկեր և այլ փոխատվություններ(ներառյալ ստացվելիք տոկոսագումարները) | 6448922 | 6309897 |
| Տեղաբաշխված վարկերի գծով պահուստ | -92714 | -76730 |
| | *6356208* | *6233167* |

***Ծանոթագրություն 18«Վաճառքի համար նախատեսված ներդրումներ»***

| | 30/06/15 | 31/12/14 |
|---|---|---|
| Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր | -- | -- |
| այլ երկրների պետական  արժեթղթեր | -- | -- |
| Հայաստանի Հանրապետության ոչ  պետական արժեթղթեր | -- | -- |
| այլ երկրների ոչ պետական  արժեթղթեր | -- | -- |
| ածանցյալ գործիքներ | -- | -- |
| ֆակտորինգային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | -- | -- |
| դեպիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ ծան.9 | -- | -- |
| | -- | -- |

***Ծանոթագրություն 19«Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ»***

| | 30/06/15 | 31/12/14 |
|---|---|---|
| Ստացվելիք շահաբաժիններ | -- | -- |
| Հավատարմագրային կառավարման գործառնությունների  գծով ստացվելիք գումարներ | -- | -- |
| Երաշխիքների գծով ստացվելիք գումարներ | -- | -- |
| Հեջավորման ածանցյալ գործիքներ | -- | -- |
| Ստացվելիք այլ գումարներ | -- | -- |
| Դեպիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | | |

***Ծանոթագրություն 20 «Վարձակալության գծով ստացվելիք գումարներ»***

| | 30/06/15 | 31/12/14 |
|---|---|---|
| Վարձակալության գծով ստացվելիք գումարներ | -- | -- |
| Չճանաչված տոկոսային եկամուտներ | -- | -- |
| | -- | -- |

***Ծանոթագրություն  21 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ***

| | 30/06/15 | 31/12/14 |
|---|---|---|
| Բռնագանձված գրավ | *46725* | *37603* |
| | *46725* | *37603* |

*Ծանոթագրություն 22 «Հիմնական միջոցներ և ոչ նյութական արժեքներ»*

| Շահագործման մեջ գտնվող ակտիվներ | Հող, շենք և գույք | Համակարգ-չային սարքավորում | Փոխադրա-միջոցներ | Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջին տվյալները | *6548* | *14977* | *12273* | *15779* | *49577* |
| Ավելացում | 4433 | 495 | | 4629 | **9557** |
| Օտարում | | | | | |
| *Ընթացիկ տարվա վերջի տվյալները* | *10981* | *15472* | *12273* | *20408* | *59134* |
| **Մաշվածք** | | | | | |
| Սկզբնական մնացորդ | *5014* | *11710* | *10855* | *9114* | *36693* |
| Կուտակված ամորտիզացիա | 460 | 1608 | 1227 | 889 | **4184** |
| Կուտակված արժեզրկում | | | | | |
| Վերջնական մնացորդ | *5474* | *13318* | *12082* | *10003* | *40877* |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջ | 1534 | 3267 | 1418 | 6665 | 12884 |
| Ընթացիկ տարվա վերջ | 5507 | 2154 | 191 | 10405 | 12257 |
| **Շահագործումից դուրս ակտիվներ** | | | | | |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջին տվյալները | | | | | |
| Ավելացում | | | | | |
| Օտարում | | | | | |
| *Հաշվետու ժամանակահատվածի վերջին տվյալները* | 5507 | 2154 | 191 | 10405 | 12257 |

1. **Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում**

հազ. դրամ

| | Կապ.ներդրում | Ընդամենը |
|---|---|---|
| Ինքնարժեք | | |
| Ինքնարժեք առ 01հունվարի2014թ | 562 | 562 |
| Ավելացումներ | | |
| Առ 31 դեկտեմբերի 2014թ | 562 | 562 |
| Ավելացումներ | 5907 | |
| Առ 30 հունիսի 2015թ | 6469 | 562 |
| Մաշվածություն | | |
| Առ 01 հունվարի 2015թ | 163 | 163 |
| Մաշվածության գումար | 19 | 9 |

| | | |
|---|---|---|
| Առ 30 հունիսի 2015թ | 182 | 172 |
| Հաշվեկշռային արժեք | | |
| Առ 01 հունվարի 2015թ. | 399 | 399 |
| Առ 30 հունիսի 2015թ | 6287 | 390 |

***Ծանոթագրություն 23 «Ստացվելիք տոկոսներ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Հաշվեգրված տոկոսներ | | |
| Չճանաչված տոկոսային եկամուտ | | |

***Ծանոթագրություն 24 «Այլ ակտիվներ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 28956 | 6915 |
| Դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների գծով պահուստ | -74 | -54 |
| Հետաձգված հարկային ակտիվ | | |
| Արագամաշ առարկաներ | 2123 | 2137 |
| Այլ ակտիվներ | | |
| | *31005* | *8998* |

***Ծանոթագրություն 25 «Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Բանկերից ներգրաված փոխառություններ | | |
| Բանկերից ստացված վարկեր և այլ փոխառություններ | | |

***Ծանոթագրություն 26 «Դրամային շուկայից ստացված այլ փոխառություններ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Ֆինանսական կազմակերպություններից ներգրաված փոխառություններ | | |

***Ծանոթագրություն 27 «Հաճախորդներից ներգրավածղ փոխառություններ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Ներգրավված ցպահանջ փոխառություններ | | |
| Ներգրավված ժամկետային փոխառություններ(ներառյալ վճարվելիք տոկոսագումարները) | 5984621 | 6048248 |
| Ռեպո համաձայնագրեր բանկերի հետ(ներառյալ վճարվելիք տոկոսագումարները) | 1092496 | |
| | 7077117 | 6048248 |

***Ծանոթագրություն 28 «Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Առանց տոկոսի արժեթղթր | | |
| Տոկոսային արժեթղթեր | | |
| Թողարկված այլ արժեթղթեր | | |

***Ծանոթագրություն 29 «Վճարվելիք գումարներ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Վճարման ենթակա շահաբաժիններ | | |
| Հավատարմագրային կառավարման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | | |
| Վճարվելիք տոկոսներ | | |

***Ծանոթագրություն 30 «Այլ պարտավորություններ»***

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Պարտավորություններ տրամադրված չեկերի գծով | | |
| Կրեդիտորական պարտքեր | 46586 | 47657 |
| Այլ պարտավորություններ | 2322 | 1206 |
| | *48908* | *48863* |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 17049 | 17049 |
| Պահուստներ | 6390 | 6242 |

***Ծանոթագրություն 31 «Կանոնադրական կապիտալ»***

Առ 30 հունիսի 2015թ. Ընկերությունում գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 200.000,0 հազար ՀՀ դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրությանը, կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 (հարյուր) բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 2.000,0 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով:

Կազմակերպության մասնակիցներն են՝

| **Մասնակցի անունը/անվանումը** | **Բաժնետոմսերի քանակ (հատ)** | **Բաժնեմասի անվանական արժեքը (հազ.դրամ)** | **Ընդհանուր գումարը (հազ.դրամ)** |
|---|---|---|---|
| Հակոբ Աշոտի Հակոբյան | 50 | 2.000 | 100.000 |
| Արսեն Սեյրանի Միքայելյան | 50 | 2.000 | 100.000 |
| **Ընդամենը՝** | **100** | | **200.000** |

Ընկերության կանոնադրական կապիտալը իր մասնակիցների կողմից ներդրվել է ՀՀ դրամով, և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ և կապիտալի այլ տեղաբաշխումներ ՀՀ դրամով:

*Ծանոթագրություն 32 «Վերագնահատման պահուստներ»*

| | *30/06/15* | *31/12/14* |
|---|---|---|
| Վաճառքի համար նախատեսված ներդրումների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/ վնաս | 25238 | 256539 |
| Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ | | |
| Այլ պահուստներ | | |
| | *25238* | *256539* |

*Ծանոթագրություն 33 «Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերաբերյալ»*

Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների մասին ծանոթագրությունը կազմվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև մարման ամսաթիվը մնացած ժամանակաշրջանի մեթոդով:

Այս վերլուծությունում չեն ներառվում այն ոչ ֆինանսական ակտիվները, որոնք չունեն ժամկետայնություն:

| Ակտիվներ | *1 ամսից պակաս* | *1-ից 3 ամիս* | *3 ամսից 1 տարի* | *1-ից 3 տարի* | *3 տարուց ավելի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| *Պահանջներ ռեզիդենտ բանկերի նկատմամբ* | | | *1125070* | | | *1125070* |
| *Պահանջներ կառավարության նկատմամբ* | | | *21580* | | | *21580* |
| *Պահանջներ տրամադրված վարկերի գծով* | *556576* | *302739* | *1045555* | *3156242* | *1191500* | *6252612* |
| *Պարտատոմսեր* | | | | | | |
| *Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր* | | | | *402264* | *726157* | *1128421* |
| *Հաշվարկված ստացվելիք տոկոսներ* | *46208* | *19403* | | | | *65611* |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | *602784* | *322142* | *2192205* | *3558506* | *1917657* | *8593294* |

| Պարտավորություններ | *1 ամսից պակաս* | *1-ից 3 ամիս* | *3 ամսից 1 տարի* | *1-ից 3 տարի* | *3 տարուց ավելի* | *Ընդամենը* |
|---|---|---|---|---|---|---|
| *Պարտավորություններ ներգրաված փոխառությունների գծով* | | | *1230000* | *1686265* | *2856759* | *5773024* |
| *Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ* | *7038* | | | | | *7038* |
| *Հաշվարկված վճարվելիք տոկոսներ* | *24425* | *42740* | *47289* | | | *114454* |
| *Ռեպո համաձայնագրերով ներգրաված արժեթղթեր* | *1089917* | | | | | *1089917* |
| *Այլ պարտավորություններ* | *39548* | | | | | *39548* |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | *1160928* | *42740* | *1277289* | *1686265* | *2856759* | *7023981* |

***Ծանոթագրություն 34 «Արտարժութային ռիսկ»***

Այս ծանոթագրությունում արտացոլվում են դրամային և արտարժութային ակտիվների և պարտավորությունների զուտ դիրքերը:

| | Դրամ | Ազատ փոխարկելի արտարժույթ | Սահմանափակ փոխարկելի արտարժույթ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | 382399 | 382399 | - | 382399 |
| Պարտավորություններ | 379952 | 379952 | - | 379952 |
| *Զուտ արտարժութային դիրք* | *2447* | *2447* | *-* | *2447* |

***Ծանոթագրություն 35 «Տոկոսադրույքի ռիսկ»***

Այս ծանոթագրությունում արտացոլվում են ակտիվների և պարտավորությունների միջին տոկոսադրույքները:

| | մինչև 1 ամիս | | 1-3 ամիս | | 3 ամսից 1 տարի | | 1 տարուց ավելի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նախորդ տարի | ընթացիկ տարի | նախորդ տարի | ընթացիկ տարի | նախորդ տարի | ընթացիկ տարի | նախորդ տարի | ընթացիկ տարի |
| **Ներգրավված միջոցներ** | | | | | | | | |
| Դրամով | 13 | 13 | 13 | 13 | 14 | 14 | 9.2 | 9.2 |
| Արտարժույթով | | | | | | | 8.9 | 8.9 |
| **Տեղաբաշխված միջոցներ** | | | | | | | | |
| Դրամով | 23.1 | 22.7 | 23.5 | 23.3 | 23.5 | 22.9 | 15.3 | 15.7 |
| Արտարժույթով | | | | | | | 14.5 | 14.5 |

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա փոփոխությունների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքի և փոխարժեքի տատանումները: Կազմակերպությունը չի տեղաբաշխել և չի ստացել տատանվող տոկոսադրույքով վարկեր: Բացի փոխարժեքային ռիսկի կենտրոնացումներից, Կազմակերպությունը չունի շուկայական ռիսկի այլ կենտրոնացումներ:

***Ծանոթագրություն 36 «Պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ»***

Կազմակերպությունը իրավաբանական անձանց տրամադրել է երաշխիքներ, որոնց մնացորդը 30.06.2015թ-ի դրությամբ կազմում է 6.000,0 հազ.ՀՀ դրամ: Կազմակերպության կողմից տրամադրվել են նաև վարկային գծեր, որոնց չօգտագործած մասը 30.06.2015 թ-ի դրությամբ կազմում է 336.014,0 հազ. ՀՀ դրամ: Նշված պոտենցիալ պարտավորությունների գծով կատարվել է պահուստավորում 6.390,0 հազ.ՀՀ դրամի չափով:

***<u>Ծանոթագրություն 37 «Ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների կենտրոնացում»</u>***

Կազմակերպության տեղաբաշխված միջոցների կենտրոնացումը ըստ ճյուղերի /մայր գումարի մնացորդ/ հետևյալն է`

| | |
|---|---|
| Արդյունաբերություն- | 819.506.0 հազ ՀՀ դրամ |
| Գյուղատնտեսություն- | 69.041.0 հազ. ՀՀ դրամ |
| Շինարարություն- | 181.285.0 հազՀՀ դրամ |
| Տրանսպորտ և կապ - | 23.589.0 հազ ՀՀ դրամ |
| Առևտուր - | 2.141.120.0 հազ ՀՀ դրամ |
| ֆինանսական հատված- | 1.125.000.0 հազ ՀՀ դրամ |
| Հիպոթեքային վարկեր- | 157.065.0 հազ ՀՀ դրամ |
| Սպառողական վարկեր- | 1.451.401.0 հազ ՀՀ դրամ |
| Տնտեսության այլ ճյուղեր- | 1.558.024.0 հազ ՀՀ դրամ |

***<u>Ծանոթագրություն 38 «Գրավադրված ակտիվներ»</u>***

Կազմակերպության կողմից տրամադրված վարկերի մայր գումարների մնացորդը 30.06.2015թ-ի դրությամբ կազմում է 6.401.031,0 հազ.ՀՀ դրամ, 6.000,0 հազ.ՀՀ դրամի երաշխիք: Գրավադրված ակտիվների և ստացված երաշխավորությունների ետհաշվեկշռային արժեքը կազմում է 15.574.723,0 հազ. ՀՀ դրամ, որից

| | |
|---|---|
| Անշարժ գույք - | 6.617.860,0 հազ.ՀՀ դրամ, |
| Այլ հիմնական միջոցներ բ- | 660.760,0 հազ.ՀՀ դրամ, |
| Պատրաստի արտադրանք և ապրանքներ - | 449.650,0 հազ.ՀՀ դրամ, |
| Ոսկյա իրեր - | 1.325.895,0 հազ.ՀՀ դրամ, |
| Այլ գրավ - | 59.106,0 հազ.ՀՀ դրամ, |
| Արժեթղթեր - | 1.600.000,0 հազ.ՀՀ դրամ, |
| Փոխադրամիջոցներ - | 425.255,0 հազ.ՀՀ դրամ: |

Ստացվել են երաշխավորություններ- 4.416.255.0 հազ.ՀՀ դրամի չափով:

***<u>Ծանոթագրություն 39 «Կապակցված կողմեր»</u>***

Կողմերը համարվում են կապակցված եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենա մյուսի վրա` ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով կազմակերպության կապակցված կողմերն են` նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, խորհրդի անդամները ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկող այլ անձինք և կազմակերպությունները:

Մասնակիցներ

| | |
|---|---|
| Հակոբ Հակոբյան | բաժնետեր |
| Արսեն Միքայելյան | բաժնետեր |

Մասնակցի հետ փոխկապակցված անձ

| | |
|---|---|
| «Քարավան»ՍՊԸ («Բլեսս» ՈՒՎԿ փոխատու) | միակ մասնակից` Հակոբ Հակոբյան |

ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ

| | |
|---|---|
| Հայկ Ստեփանյան | գլխավոր տնօրեն |
| Լիլիթ Նաջարյան | գլխավոր հաշվապահ |
| Աշոտ Գրիգորյան | վարչության անդամ |

ԽՈՐՀՈՒՐԴ

| | |
|---|---|
| Արսեն Միքայելյան | Խորհրդի նախագահ |
| Հակոբ Հակոբյան | Խորհրդի անդամ |
| Համլետ Սիմոնյան | Խորհրդի անդամ |

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում:
Այդ գործարքները ներառում են փոխառությունների տրամադրումը, վարկերի տրամադրումը և վարձակալական ծառայությունների մատուցումը:
Նշված գործարքները իրականացվել են շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:
2015թ հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության հետ կապված կողմերի գործարքների գծով առկա են հետևյալ մնացորդները:

| **Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ** | **հազ.դրամ** |
|---|---|
| Մնացորդը առ 31.12.2014թ | 63.499,0 |
| տրամադրված վարկեր | 7.872,0 |
| մարված վարկեր | 31.190,0 |
| Մնացորդը առ 30.06.2015թ. | 40.181,0 |
| Տոկոսային եկամուտ | 3.197,0 |

| **Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ** | **հազ.դրամ** |
|---|---|
| Մնացորդը առ 31.12. 2014 | 5.906.976,0 |
| ստացված գումար | |
| վճարված գումար | 132.000,0 |
| վերագնահատում | 1.952,0 |
| Մնացորդը առ 30.06.2015 | 5.773.024,0 |
| Տոկոսային ծախս | 265.089,0 |

| **Գործարքներ** | **Պայմանագրի գին /ամսական/** | **Տոկոսադրույք** | **Տևողություն** |
|---|---|---|---|
| Տարածքի վարձակալություն | 200,0 հազ.դրամ | | 15 տարի |
| Տարածքի վարձակալություն | 200,0 հազ.դրամ | | Անժամկետ |
| Տարածքի վարձակալություն | 250,0 հազ.դրամ | | Անժամկետ |

Կազմակերպության և բաժնետիրոջ, բաժնետիրոջ հետ կապակցված անձի միջև կնքված վարձակալության պայմանագրերի համաձայն վերջիններիս սեփականության իրավունքով

պատկանող տարածքները վարձակալվել են` Կազմակերպության գործունեությունն ապահովելու նպատակով:

2015թ-ի հունիսի 30-ի դրությամբ Կազմակերպության ղեկավարությանը հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը կազմում է 50.422,0 հազ ՀՀ դրամ: